ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 486

27 օգոստոսի 2018թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի, Իսակովի փողոցի 2-րդ փակուղու թիվ 2 հասցեում գտնվող տունը սեփականության իրավունքով /վկայական N 08052018-04-0037 / պատկանում է Գրիգոր և Վարդան Սուպիկյաններին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Աստղիկ Մանուկյան » ԱՁ /վկայական թիվ 096/ կողմից հաստատված հատակագծերը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Իսակովի փողոցի 2-րդ փակուղու թիվ 2 հասցեում գտնվող տան զբաղեցրած հողամասի 356.0 քմ մակերեսով մասին բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Իսակովի փողոց 2-րդ փակուղի թիվ 2, 216.0 քմ մակերեսով մասին բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Իսակովի փողոց 2-րդ փակուղի թիվ 2/1 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 487

27 օգոստոսի 2018թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Կարապետ Մելքոնյանին /համասեփ. Ն.Բաղումյան/ պատկանող 04-002-0874-0043, 04-002-0874-0052 և 04-002-0874-0063 ծածկագրերով հողամասերը շինություններով միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ ք. Էջմիածին, Շահումյան փողոց թիվ 75/7 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 488

28 դեկտեմբեր 2018թ.

ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԿՈԲ ՊՈՂՈՍԻ ՂԱՓԱՆՋՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկման առնելով Էջմիածին քաղաքի Կամո փողոցի թիվ 38 տան բնակիչ Հակոբ Պողոսի Ղափանջյանի դիմումը պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 24.06.2009թ. տրված թիվ 2747 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը/, Էջմիածին քաղաքի Կամո փողոցի թիվ 38 հասցեում գտնվող 830քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Կամո փողոցի թիվ 38 հասցեում գտնվող 830քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել՝ Հակոբ Պողոսի Ղափանջյանի /ծնված 26.09.1966թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 489

30 օգոստոսի 2018թ. ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԵՐՈՒԺԱՆ ՄՅԱՍՆԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՀԱՍՄԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ, ԱՆԻ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ՆԵԼԼԻ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկման առնելով Մերուժան Մյասնիկի Գրիգորյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն ՀՀ ժողովրդական պատգամավորների էջմիածնի քաղաքային խորհրդի 08.06.1991թ. գործադիր կոմիտեի թիվ 10 որոշման քաղվածքի, էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 66 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Մերուժան Մյասնիկի Գրիգորյանին, Հասմիկ Արմենակի Մարտիրոսյանին, Անի Մերուժանի Գրիգորյանին և Նելլի Մերուժանի Գրիգորյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 405քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 295քմ սահմանազատված հողամաս, վերջինիս վրա նույնպես կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ ևս չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 66 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 295քմ մակերեսով հողամասը որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել՝ Մերուժան Մյասնիկի Գրիգորյանի /ծնված 29.10.1960թ./, Հասմիկ Արմենակի Մարտիրոսյանի /ծնված 22.07.1959թ./, Անի Մերուժանի Գրիգորյանի /ծնված 22.08.1985թ./ և Նելլի Մերուժանի Գրիգորյանի /ծնված 11.08.1988թ./ սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 66:
3. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 490

«30» դեկտեմբեր 2018թ

ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 05-Ի <<ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 171 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ ու 34-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947–Ն և 10.08.2017թ. թիվ 1016-Ն որոշումների պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի համայնքի ղեկավարի 2018 թվականի ապրիլի 05-ի <<Էջմիածին քաղաքի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների եվ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին հաշվառման ընդունելու և ցուցակը հաստատելու մասին>> թիվ 171 որոշման մեջ կատարել փոփոխություն .

- Որոշման հիմնավորման <<զինծառայության ընթացքում ստացած հիվանդության պատճառով մահացած զինծառայող Կարեն Անուշավանի Սիմոնյանի կնոջ՝ Լուսինե Արարատի Այվազյանի>> բառերը փոփոխել <<զինծառայության ընթացքում ստացած հիվանդության պատճառով մահացած զինծառայող Կարեն Անուշավանի Սիմոնյանի երեխաների մոր՝ Լուսինե Արարատի Այվազյանի>> բառերով

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված
Էջմիածնի քաղաքապետի
05 ապրիլի 2018 թիվ 173 որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ

NN ը/կ	Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի ազգանունը, անունը, հայրանունը	Համայնքի անվանումը և հաշվառման վերցնելու մասին համայնքի ղեկավարի որոշման համարը, ամսաթիվը, տարեթիվը	Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի հաշմանդամության խումբը, վնասվածք, խեղում ստանալու կամ հիվանդություն ձեռք բերելու օրը, ամիսը, տարեթիվը, սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորա-բաժանման տեղեկանքի համարը, ամսաթիվը, տարեթիվը	Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի օրենքով սահմանված ընտանիքի անդամների թիվը, ազգանունը, անունը, հայրանունը, ազգակցական կապը	Բնակարանային պայմանները՝ շահառուի հաշվառման վայրը, ով է տան սեփականատերը, համատեղ բնակվող անձանց թիվը և սեփականության վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ 4-րդ կարգի վթարային՝ քանդման ենթակա բնակելի տարածություններում ապրելու դեպքում՝ փաստը հավաստող եզրակացության տրամադրման օրը, ամիսը, տարեթիվը, համարը, տրամադրող մարմնի անվանումը	Պահանջվող սենյակների թիվը
1	2	3	4	5	6	7
	Գարիկ Շուրայի Գյոզալյան	Էջմիածնի քաղաքապետարան 05 ապրիլի 2018թ, թիվ 173 որոշում	2-րդ խմբի հաշմանդամ Վիրավորվել է 05.07.1993թ. ՀՀ սահմանները պաշտպանելիս Տեղեկանք՝ 08.10.2008թ. թիվ 36/2320	Դուստր՝ Գայանե Գարիկի Գյոզալյան Դուստր՝ Հռիփսիմե Գարիկի Գյոզալյան Որդի՝ Կարեն Գարիկի Գոզալյան	ՀՀ, ք. Էջմիածին, Սպանդարյան փողոց, թիվ 28[ա] շենք, թիվ 21 բն. Սեփականատեր՝ Գարիկ Շուրայի Գյոզալյան Համատեղ բնակվում են 5 /հինգ/ անձ՝ Գարիկ Շուրայի Գյոզալյան, Էլզա Վազգենի Հովսեփյան /կինը/, Գայանե Գարիկի Գյոզալյան, Հռիփսիմե Գարիկի Գյոզալյան և Կարեն Գարիկի Գոզալյան Տան ընդհանուր մակերեսը՝ 43,2քմ	3

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 491

«30» օգոստոսի 2018թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի << ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 5 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին օրենքի>> Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Էջմիածին համայնքի Ավագանու 2018 թվականի օգոստոսի 27-ի թիվ 9 արտահերթ նիստի թիվ 55 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Էջմիածնի համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 9-ի <<Էջմիածնի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի աշխատանքների ծավալի ավելացման եվ հավելավճար տալու մասին >> թիվ 5 որոշումը ճանաչել ուժը կորցրած:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2018թ. սեպտեմբերի 1-ից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 492

ք.Էջմիածին

30 դեկտեմբեր 2018թ.

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ
ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԼԵՏ ԺՈՐԱՅԻ ՄԵԼՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկման առնելով Էջմիածին քաղաքի Սովետական Բանակի փողոցի թիվ 17 տան բնակիչ Համլետ Ժորայի Մելոյանի դիմումը պարզվել է, որ.

- Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 23.12.2017թ. տրված թիվ 7442 սեղանամատյանով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի, Էջմիածին քաղաքի Սովետական Բանակի փողոցի թիվ 17 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Համլետ Ժորայի Մելոյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 600քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 58քմ սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սովետական Բանակի փողոցի թիվ 17 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 58քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել՝ Համլետ Ժորայի Մելոյանի /ծնված 12.04.1951թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 493

30 օգոստոսի 2018թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի, Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 12/57 հասցեում գտնվող խանութը և գեղեցկության սրահը սեփականության իրավունքով /վկայական 2617896 / պատկանում է Գայանե Ավետիսյանին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Աստղիկ Մանուկյան » ԱՁ /վկայական թիվ 096/ կողմից հաստատված հատակագծերը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 12/57 հասցեում գտնվող խանութի և գեղեցկության սրահի զբաղեցրած հողամասի 51.0 քմ մակերեսով մասին շինությունով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց թիվ 12/57, 49.0 քմ մակերեսով մասին շինությունով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց թիվ 12/76 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 494

30 օգոստոսի 2018թ.

ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0646-0005 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Չարենց 1-ին թաղամաս թիվ 38 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 495

31 օգոստոսի 2018թ. ք.Էջմիածին

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈԴ քաղաքացի Տատյանա Միխայիլի Աղամալյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք սեփականության վկայական թիվ 27022014-04-0016 տրված 27.02.2014թ./ Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 24 շենքի բակում գտնվող ավտոտնակի օգտագործման նպատակը բնակելի տան փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի և ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 24 շենքի բակում գտնվող ավտոտնակի օգտագործման նպատակը՝ փոփոխել բնակելի տան, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք.Էջմիածին Բաղրամյան փողոց թիվ 24/61:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 496

31 դեկտեմբեր 2018թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Հարություն Թեմուրյանին պատկանող բնակելի տանը /հիմք՝ սեղ. մատյան 3801/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց թիվ 34/2:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 497

31 օգոստոսի 2018թ. ք.Էջմիածին

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՌԴ քաղաքացի Տատյանա Միխայիլի Աղամալյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք սեփականության վկայական թիվ 22082018-04-0022 տրված 22.08.2018թ./ Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 24/60 հասցեում գտնվող ավտոտնակի օգտագործման նպատակը բնակելի տան փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 24/60 հասցեում գտնվող ավտոտնակի օգտագործման նպատակը՝ փոփոխել բնակելի տան, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 498

31 դեկտեմբեր 2018թ. ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՈՒՐԳԵՆ ՄԿՐՏԻՉԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկման առնելով էջմիածին քաղաքի Ա.Ասատրյան /նախկին Իսակով/ փողոցի թիվ 11 տան բնակիչ Գուրգեն Մկրտիչի Գրիգորյանի դիմումը պարզվել է, որ.

- Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 22.05.2018թ. տրված թիվ 2870 և 2871 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի, էջմիածին քաղաքի Ա.Ասատրյան /նախկին Իսակով/ փողոցի թիվ 11 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Գուրգեն Մկրտիչի Գրիգորյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 800քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 87քմ սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի Ա.Ասատրյան /նախկին Իսակով/ փողոցի թիվ 11 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 87քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել՝ Գուրգեն Մկրտիչի Գրիգորյանի /ծնված 22.04.1950թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 499

31 օգոստոս 2018թ. ք.Էջմիածին

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 8ա/1 տան բնակիչ Վյաչեսլավ Վազգենի Ավետյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 1728091 տրված 05.03.2005թ. և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 16.08.2018թ. թիվ ԱՏ-15/08/2018-6-0045 տրված տեղեկանքը/ Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 8/5 հասցեում գտնվող արհեստանոցի գործառնական նշանակությունը բնակելիի, իսկ օգտագործման նպատակը՝ ավտոտնակի փոփոխելու և շինության պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշմամբ և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 8/5 հասցեում գտնվող արհեստանոցի գործառնական նշանակությունը փոփոխել բնակելիի, իսկ օգտագործման նպատակը՝ ավտոտնակի, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Վերը նշված շինության պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 48քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրի բնակելի կառուցապատման:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 500

31 օգոստոս 2018թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Արարատ Սիմոնյանի լիազորված անձ Մուշեղ Մանուկյանի դիմումը անշարժ գույքը բաժանելու մասին պարզվել է.

Էջմիածին քաղաքի, Պռոշյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող տունը սեփականության իրավունքով /վկայական N 17082018-04-0051 / պատկանում է Արարատ Սիմոնյանին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Մաչանյան Կարեն » ԱՁ /վկայական թիվ 0244/ կողմից հաստատված հատակագծերը :

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Պ. Պռոշյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող տան զբաղեցրած հողամասի 815.0 քմ մակերեսով մասին բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Պ. Պռոշյան փողոց թիվ 11, 519.0 քմ մակերեսով մասին բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Պ. Պռոշյան փողոց թիվ 11/1 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 501

03 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Արմինե Կարապետյանի լիազորված անձ Կարեն Սիմոնյանի դիմումը բնակելի տունը բաժանելու մասին պարզվել է .

Էջմիածին քաղաքի, Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 14/82 հասցեում գտնվող տունը սեփականության իրավունքով /վկայական N 22082018-04-0060 / պատկանում է Արմինե Կարապետյանին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Նորայր Դարբինյան» ԱՁ /վկայական թիվ 020/ կողմից հաստատված հատակագծերը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 14/82 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած հողամասի 87.5 քմ մակերեսով մասին բնակելի տնով /204.1քմ/տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց թիվ 14/82.
199.4 քմ մակերեսով մասին /ընդ. օգտագործման/ շինությունով /19,9քմ/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց թիվ 14/83.
199.4 քմ մակերեսով մասին /ընդ. օգտագործման/ շինությունով /19.8 քմ/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց թիվ 14/84.
199.4 քմ մակերեսով մասին /ընդ. օգտագործման/ շինությունով /99.3 քմ/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց թիվ 14/85.
199.4 քմ մակերեսով մասին /ընդ. օգտագործման/ շինությունով /104.8 քմ/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց թիվ 14/86.
199.4 քմ մակերեսով մասին /ընդ. օգտագործման/ շինությունով /18.9 քմ/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց թիվ 14/87.
199.4 քմ մակերեսով մասին /ընդ. օգտագործման/ շինությունով /18.1 քմ/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց թիվ 14/88.
199.4 քմ մակերեսով մասին /ընդ. օգտագործման/ շինությունով /17.8 քմ/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց թիվ 14/89.
199.4 քմ մակերեսով մասին /ընդ. օգտագործման/ շինությունով /17.5 քմ/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց թիվ 14/90.
77.4 քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց թիվ 14/91:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 502

04 սեպտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 23.07.2018Թ. ԹԻՎ 421 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Առաջին Ծիծեռնակ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Արշամի Զաքարյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք սեփականության վկայական թիվ 1223998 տրված 21.02.2005թ./, Էջմիածին քաղաքի Մարգարայի խաչուղու թիվ 15 հասցեում գտնվող արտադրական շինության /արհեստանոցի/ գործառնական նշանակությունը հասարակականի փոփոխելու և շինության պահպանման ու սպասարկման համար գբաղեցրած հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով Էջմիածնի համայնքի ավագանու 27.08.2018թ. թիվ 9 արտահերթ նիստի թիվ 56 որոշումը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և նույն օրենքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշմամբ, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1732-ն որոշմամբ հաստատված Էջմիածնի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման կարգի 48-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Մարգարայի խաչուղու թիվ 15 հասցեում գտնվող արտադրական շինության /արհեստանոց/ գործառնական նշանակությունը փոփոխել հասարակականի, իսկ օգտագործման նպատակը՝ վերանորոգման կետի, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Վերը նշված շինության պահպանման և սպասարկման համար գբաղեցրած 1300քմ մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել՝ բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:
3. Շինությանը տրամադրել հասցե՝ ք.Էջմիածին Էջմիածին- Մարգարա խաչուղի թիվ 12:
4. Ուժը կորցրած ճանաչել Էջմիածնի քաղաքապետի 23.07.2018թ. թիվ 421 որոշումը:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 503

04 սեպտեմբերի 2018թ.

Ք.ԷՋՄԻԱԾԻՆ

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԵՎՈՐԳ, ՌԱՖԻԿ ԵՎ ՍԱՄՎԵԼ ԿԱՌԼԵՆԻ ՂԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկման առնելով էջմիածին քաղաքի Չերնիշևսկի փողոցի թիվ 37 տան բնակիչ Գևորգ Կառլենի Ղազարյանի դիմումը պարզվել է, որ.

- Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 26.01.2016թ. տրված թիվ 542, 543 և 544 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի, էջմիածին քաղաքի Չերնիշևսկի փողոցի թիվ 37 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Գևորգ, Ռաֆիկ և Սամվել Կառլենի Ղազարյաններին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 430քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 14քմ սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի Չերնիշևսկի փողոցի թիվ 37 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 14քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել՝ Գևորգ /ծնված 25.08.1962թ./, Ռաֆիկ /ծնված 27.10.1957թ./ և Սամվել /ծնված 16.01.1971թ./ Կառլենի Ղազարյաններին սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 504

04 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Ղուկասյան փողոցի թիվ 9 տան բնակիչ էդիկ Երվանդի Մկրտչյանը դիմել է էջմիածնի քաղաքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 2209785 տրված 15.06.2006թ. և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 22.08.2018թ. թիվ ԱՏ-20/08/2018-6-0043 տրված տեղեկանքը/ էջմիածին քաղաքի Ռ.Մելիքյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող կիսակառույց արտադրամասի գործառնական նշանակությունը հասարակականի, իսկ օգտագործման նպատակը կիսակառույց խանութի փոփոխելու և շինության պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասի գործառնական նշանակությունը հասարակականի փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշմամբ և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Ռ.Մելիքյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող կիսակառույց արտադրամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակականի, իսկ օգտագործման նպատակը՝ կիսակառույց խանութի, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Վերը նշված շինության պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 76քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրի հասարակական կառուցապատման:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 505

04 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Ղուկասյան փողոցի թիվ 9 տան բնակիչ Էդիկ Երվանդի Մկրտչյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 2210472 տրված 05.05.2006թ. և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 22.08.2018թ. թիվ ԱՏ-20/08/2018-6-0044 տրված տեղեկանքը/ Էջմիածին քաղաքի Ռ.Մելիքյան փողոցի սկզբնամասում գտնվող, 20քմ մակերեսով բնակավայրի այլ հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Ռ.Մելիքյան փողոցի սկզբնամասում գտնվող, 20քմ մակերեսով բնակավայրի այլ հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:
2. Հողամասին տրամադրել հասցե՝ք.Էջմիածին Ռ.Մելիքյան փողոց թիվ 2/2:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 506

04 սեպտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Ղուկասյան փողոցի թիվ 9 տան բնակիչ էդիկ Երվանդի Մկրտչյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 2210471 տրված 05.05.2006թ. և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 22.08.2018թ. թիվ US-20/08/2018-6-0042 տրված տեղեկանքը/ Էջմիածին քաղաքի Ռ.Մելիքյան փողոցի սկզբնամասում գտնվող հրաձգարանի գործառնական նշանակությունը հասարակականի, իսկ օգտագործման նպատակը խանութի փոփոխելու և շինության պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասի գործառնական նշանակությունը հասարակականի փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշմամբ և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Ռ.Մելիքյան փողոցի սկզբնամասում գտնվող հրաձգարանի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակականի, իսկ օգտագործման նպատակը՝ խանութի, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Վերը նշված շինության պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 120քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրի հասարակական կառուցապատման:
3. Խանութին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին Ռ.Մելիքյան փողոց թիվ 1:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 507

04 սեպտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱԼԻԿՈ ՍՐԱՊԻ ՇԱՐԱՖՅԱՆԻ,ՎԱՐԴԱՆՈՒՇ ՊԱՐՍԱՄԻ ՇԱՐԱՖՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ՇԱԼԻԿՈՅԻ ՇԱՐԱՖՅԱՆԻ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՍՐԱՊՅՈՆԻ ՇԱՐԱՖՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկման առնելով էջմիածին քաղաքի Սովետական Բանակի փողոցի թիվ 10/2 տան բնակիչ Շալիկո Սրապի Շարաֆյանի դիմումը պարզվեց, որ իրեն, Վարդանուշ Պարսամի Շարաֆյանին, Նարինե Շալիկոյի Շարաֆյանին և Արթուր Սրապյոնի Շարաֆյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 05.11.1997թ. տրված սեփականության վկայագիրը, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 13.07.2018թ. և 15.08.2018թ. տրված թիվ 4604 և 5364 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը/, էջմիածին քաղաքի Սովետական Բանակի փողոցի թիվ 10/2 հասցեում գտնվող 272քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սովետական Բանակի փողոցի թիվ 10/2 հասցեում գտնվող 272քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել՝ Շալիկո Սրապի Շարաֆյանի /ծնված 14.05.1960թ./, Վարդանուշ Պարսամի Շարաֆյանի /ծնված 07.09.1959թ./, Նարինե Շալիկոյի Շարաֆյանի /ծնված 14.09.1979թ./ և Արթուր Սրապյոնի Շարաֆյանի /ծնված 09.07.2013թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄԹԻՎ 508

04 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի քաղաքային համայնքի և Սերոբ Ռաֆիկի Պողոսյանի միջև 17.06.2005թ. /սեղանամատյան 3405/ կնքվել է Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Էջմիածին վայրում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,24հա մակերեսով անօգտագործելի հողամասի վարձակալության պայմանագիր:

Այժմ Սերոբ Ռաֆիկի Պողոսյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան, վերը նշված հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու խնդրանքով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքային համայնքի և Սերոբ Ռաֆիկի Պողոսյանի միջև 17.06.2005թ. կնքված Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Էջմիածին վայրում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,24հա մակերեսով անօգտագործելի հողամասի վարձակալության պայմանագիրը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:
2. Հանձնարարել քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին նոտարական գրասենյակում լուծելու հողամասի վարձակալության պայմանագիրը:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄԹԻՎ 509

04 սեպտեմբերի 2018թ.Ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի քաղաքային համայնքի և Սոնյա Կարապետի Կարապետյանի միջև 04.11.2003թ. /սեղանամատյան 6707/ կնքվել է Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Զվարթնոց վայրում գտնվող գյուղատնտեսական նշանակության 1հա մակերեսով 2-րդ կարգի վարելահողի վարձակալության պայմանագիր:

Այժմ Սոնյա Կարապետի Կարապետյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան, վերը նշված հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու խնդրանքով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքային համայնքի և Սոնյա Կարապետի Կարապետյանի միջև 04.11.2003թ. կնքված Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Զվարթնոց վայրում գտնվող գյուղատնտեսական նշանակության 1հա մակերեսով 2-րդ կարգի վարելահողի վարձակալության պայմանագիրը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:
2. Հանձնարարել քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին նոտարական գրասենյակում լուծելու հողամասի վարձակալության պայմանագիրը:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 510

04 սեպտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ / ՆԱՐԵԿԱՑԻ / ՓՈՂՈՑ, ԹԻՎ 14Բ ՏԱՆԸ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՊՕՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 1/7 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Էջմիածին քաղաքի Վազգեն Սարգսյան / Նարեկացի / փողոց, թիվ 14բ տանը կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված ինքնակամ շինությունը քանդելու, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու և վարչական իրավախախտման համար տուգանքը նշանակելու մասին, պարզեց որ

Վարդան Ավետիքի Կնյազյանը (հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Սարգսյան /Նարեկացի/ փող., թիվ 14գ տուն, անձանագիր _____), Էջմիածին քաղաքի Վազգեն Սարգսյան / Նարեկացի / փողոց, թիվ 14բ տանը կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, իրականացրել է ապօրինի շինության կառուցման շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի 26.07.2018թ. արձանագրության հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Վարդան Ավետիքի Կնյազյանի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող շենք-շինությունների, ճանապարհների ու փողոցների հերթական ստուգարք-այցելությունների ժամանակ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից Էջմիածին քաղաքի Վազգեն Սարգսյան / Նարեկացի / փողոց, թիվ 14բ տանը կից գտնվող համայնքային սեփականությունը հանդիսացող տարածքում հայտնաբերված ինքնակամ շինության կապակցությամբ 26.07.2018թ. կազմված արձանագրությունը ու տեղազննության ակտերը:
- Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից 12.07.2018թ. թիվ 988 գրությամբ Վարդան Ավետիքի Կնյազյանը նախազգուշացվել է, շինարարական աշխատանքների դադարեցման մասին: Լրացուցիչ կատարված տեղատեսությամբ պարզվել է, որ քաղաքացի Վարդան Ավետիքի Կնյազյանի կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել ինքնակամ շինարարությունը դադարեցնելու և Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու ուղղությամբ:
- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և

օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. Էջմիածին քաղաքի, Վազգեն Սարգսյան /Նարեկացի/ փող., թիվ 14գ տան բնակիչ Վարդան Ավետիքի Կնյազյանի կողմից, Էջմիածին քաղաքի Վազգեն Սարգսյան / Նարեկացի / փողոց, թիվ 14բ տանը կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում իրականացվել է ինքնակամ շինության կառուցման շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, ուստի քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց.

2. Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Էջմիածին քաղաքի Վազգեն Սարգսյան / Նարեկացի / փողոց, թիվ 14բ տանը կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կատարված իրավախախտման հետևանքները վերացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը սույն որոշման հետ մեկ տեղ կառաջարկի քաղաքացի Վարդան Ավետիքի Կնյազյանին իր նախաձեռնությամբ և սեփական միջոցներով քանդել ինքնակամ կառույցը և ազատել ապօրինի տիրապետումից Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը, քանի որ, հիշյալ ինքնակամ կառույցը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N912-Ն որոշման շրջանակներում՝ ենթակա չէ օրինականացման:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 օգոստոսի 22-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 30.07.2018թ.-ի փոստ. անդորրագիր AG010435951AM/ քաղաքացի Վարդան Ավետիքի Կնյազյանը:

Վերջինս, չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Արդյունքում Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել

1. Վարույթի մասնակից Վարդան Ավետիքի Կնյազյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով՝ 400 000 / չորս հարյուր հազար /ՀՀ դրամ:

2. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, համայնքի ղեկավարին առաջարկել՝ Էջմիածին քաղաքի Վազգեն Սարգսյան /Նարեկացի/ փողոց, թիվ 14բ տանը կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում հայտնաբերված ինքնակամ շինությունը /քարե պարիսպ/ համարել Էջմիածին համայնքի սեփականությունը:

3. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետով, այն է՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը՝ առաջարկել Վարդան Ավետիքի Կնյազյանին հատուցել Էջմիածին համայնքին հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

4. Նախազգուշացնել Վարդան Ավետիքի Կնյազյանին, որ եթե նա շարունակի իրականացնել շինարարական աշխատանքները սույն արձանագրության հիման վրա համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակելուց հետո, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ և հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առքուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի <<ա>> կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ <u>իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:</u>

Տվյալ պարագայում Վարդան Ավետիքի Կնյազյանը Էջմիածին քաղաքի Վազգեն Սարգսյան /Նարեկացի/ փողոց, թիվ 14բ տանը կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով իրականացրել է ապօրինի ինքնակամ կառույցի շինարարություն:

Այսինքն՝ Վարդան Ավետիքի Կնյազյանը կատարել է առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասին 3-րդ կետի համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ա) կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վարդան Ավետիքի Կնյազյանի նկատմամբ տուգանք նշանակել Էջմիածին քաղաքի Վազգեն Սարգսյան /Նարեկացի/ փողոց, թիվ 14բ տանը կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար, 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. Չօրինականացնել Վազգեն Սարգսյան /Նարեկացի/ փողոց, թիվ 14բ տանը կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի կառուցված ինքնակամ կառույցը:

3. Էջմիածին քաղաքի Վազգեն Սարգսյան /Նարեկացի/ փողոց, թիվ 14բ տանը կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում Վարդան Ավետիքի Կնյազյանի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառուցված ինքնակամ կառույցը քանդել:

4. Նախազգուշացնել Վարդան Ավետիքի Կնյազյանին, որ եթե նա, սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո, շարունակի իրականացնել շինարարական աշխատանքները9, ապա համաձայն <<Վարչական իրավախախտումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

5. Հանձնարարել աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցներին և Էջմիածնի համայնքապետարանի <<Բարեկարգում>> տնօրինությանը, քանդել ինքնակամ կառույցը և ապօրինի տիրապետումից ազատել Էջմիածին համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը:

6. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետին, սույն որոշման 5-րդ կետի համաձայն Էջմիածնի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

7. Հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին, սույն որոշման 5-րդ կետով նախատեսված վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու դեպքում, Վազգեն Սարգսյան /Նարեկացի/ փողոց, թիվ 14բ տանը կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված ինքնակամ կառույցի քանդման և դրան առնչվող բոլոր աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը դատական կարգով բռնագանձել Վարդան Ավետիքի Կնյազյանից:

8.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

9. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

10. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Դ.ՓԱՍՊԱՐՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 541

04 սեպտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾԻ ԶԱՆԳՎԱԾ, ԱՅԳԵՍՏԱՆ 20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԹԻՎ 2 ՕԺԱՆԴԱԿ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՊՕՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ, ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 1/8 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Արագածի զանգված, Այգեստան 20 հասցեում գտնվող, թիվ 2 օժանդակ դպրոցի տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող ինքնակամ զավթած հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու, դրա հետևանքները վերացնելու և վարչական իրավախախտման համար տուգանքը նշանակելու մասին, պարզեց որ Մայիս Ջանիկի Վարդանյանը (գրանցման հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ,գյուղ Խորոնք, Արարատյան 6, բնակության հասցե՝ Էջմիածին քաղաք, Արագածի զանգված, թիվ 40 տուն, անձանագիր _____), Էջմիածին քաղաքի Արագածի զանգված, Այգեստան 20 հասցեում գտնվող, թիվ 2 օժանդակ դպրոցի տարածքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանված պահանջները խախտելով՝ առանց համապատասխան թույլտվության և հողօգտագործման իրավունքի, ինքնակամ զավթել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և չի վերացրել դրա հետևանքները, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ **200 000 / երկու հարյուր հազար /ՀՀ** դրամ, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի 26.07.2018թ. արձանագրության հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման փաստով, հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Մայիս Ջանիկի Վարդանյանի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող շենք-շինությունների, ճանապարհների ու փողոցների հերթական ստուգարք-այցելությունների ժամանակ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից Էջմիածին քաղաքի Այգեստան 20 հասցեում գտնվող, թիվ 2 օժանդակ դպրոցի տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի զավթելու կապակցությամբ 26.07.2018թ. կազմված արձանագրությունը ու տեղազննության ակտը:
- Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից 25.07.2018թ. թիվ 1066 գրությամբ Մայիս Ջանիկի Վարդանյանը նախազգուշացվել է, ապօրինի զբաղեցրած հողամասը ազատելու և նախկին տեսքին բերելու մասին: Էրացուցիչ կատարված տեղատեսությամբ պարզվել է, որ քաղաքացի Մայիս Ջանիկի Վարդանյանի կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու ուղղությամբ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների

բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Էջմիածին քաղաքի, Արագածի զանգված, թիվ 40 տան, բնակիչ Մայիս Ջանիկի Վարդանյանը Էջմիածին Արագածի զանգված, Այգեստան 20 հասցեում գտնվող, թիվ 2 օժանդակ դպրոցի տարածքում առանց համապատասխան թույլտվության և հողօգտագործման իրավունքի ինքնակամ զավթել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և չի վերացրել դրա հետևանքները:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 օգոստոսի 22-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 30.07.2018թ.-ի փոստ. անդորրագիր AG010435925AM/ քաղաքացի Մայիս Ջանիկի Վարդանյանը:

Վերջինս, չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Արդյունքում Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել

1. Վարույթի մասնակից Մայիս Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ 200 000 / երկու հարյուր հազար/ՀՀ դրամ:

2. Մայիս Վարդանյանին ազատել զավթաց տարածքը և վերացնել հետևանքները

3.Նախազգուշացնել Մայիս Վարդանյանին, որ եթե նա չազատի ապօրինի զբաղեցրած հողատարածքը և նախկին տեսքը չվերականգնի, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: :

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 116-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ինքնակամ զբաղեցված հողամասերը վերադարձվում են դրանց սեփականատերերին, օգտագործողներին՝ առանց հողային օրենսդրությունը խախտողների կողմից այդ հողամասերի ապօրինի օգտագործման ժամանակահատվածում կատարված ծախսերի հատուցման:

Տվյալ պարագայում Մայիս Վարդանյանը Էջմիածին քաղաքի, Արագածի զանգված, Այգեստան 20 հասցեում գտնվող, թիվ 2 օժանդակ դպրոցի տարածքում առանց համապատասխան թույլտվության և հողօգտագործման իրավունքի ինքնակամ զավթել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և չի վերացրել դրա հետևանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի առաջին մասին 1-ին կետի համաձայն՝ պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը և դրա հետևանքները չվերացնելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 116-րդ հոդվածի երկրորդ մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մայիս Ջանիկի Վարդանյանի նկատմամբ տուգանք նշանակել Էջմիածին քաղաքի, Արագածի զանգված, Այգեստան 20 հասցեում գտնվող, թիվ 2 օժանդակ դպրոցի տարածքում առանց համապատասխան թույլտվության և հողօգտագործման իրավունքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու համար, 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. Էջմիածին քաղաքի, Արագածի զանգված, Այգեստան 20 հասցեում գտնվող, թիվ 2 օժանդակ դպրոցի տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող Մայիս Ջանիկի Վարդանյանի կողմից զավթած տարածքը ազատել, իսկ դրա հետևանքները վերացնել:

3. Նախազգուշացնել Մայիս Ջանիկի Վարդանյանին, որ եթե նա, սույն որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո, չազատի ապօրինի զբաղեցրած հողատարածքը և նախկին տեսքը չվերականգնի, ապա համաձայն <<Վարչական իրավախախտումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

4. Հանձնարարել աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցներին և Էջմիածնի համայնքապետարանի <<Բարեկարգում>> տնօրինությանը, ապօրինի տիրապետումից ազատել Էջմիածին համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը:

5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետին, սույն որոշման 4-րդ կետի համաձայն Էջմիածնի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

6. Հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին, սույն որոշման 4-րդ կետով նախատեսված վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու դեպքում, Արագածի զանգված, Այգեստան 20 հասցեում գտնվող, թիվ 2 օժանդակ դպրոցի տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ազատելու և դրա հետևանքները վերացնելու և դրան առնչվող բոլոր աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը դատական կարգով բռնագանձել Մայիս Ջանիկի Վարդանյանից:

7.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

8. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

9. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 542

04 սեպտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 41 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՊՕՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 1/1 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված ինքնակամ շինությունը քանդելու, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու և վարչական իրավախախտման համար տուգանքը նշանակելու մասին, պարզեց որ

Գեորգի Մանվելի Սայադյանը (հասցե՝ ք. Էջմիածին, Լոմոնոսով փողոցի թիվ 1 փակուղի, թիվ 10 տուն, ն/ք 004147476), Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, իրականացրել է ապօրինի շինության կառուցման շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի 26.07.2018թ. արձանագրության հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Գեորգի Մանվելի Սայադյանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող շենք-շինությունների, ճանապարհների ու փողոցների հերթական ստուգարք-այցելությունների ժամանակ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականությունը հանդիսացող տարածքում հայտնաբերված ինքնակամ շինության կապակցությամբ 26.07.2018թ. կազմված արձանագրությունը ու տեղազննության ակտերը:
- Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից 13.06.2018թ. թիվ 817 գրությամբ Գեորգի Մանվելի Սայադյանը նախազգուշացվել է, շինարարական աշխատանքների դադարեցման մասին: Լրացուցիչ կատարված տեղատեսությամբ պարզվել է, որ քաղաքացի Գեորգի Մանվելի Սայադյանի կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել ինքնակամ շինարարությունը դադարեցնելու և Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու ուղղությամբ:
- ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի 17.08.2018թ. գրությունը՝ պատասխանողի շինարարական աշխատանքները դադարեցնելու պարտավորվածության մասին:
- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և

օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. Էջմիածին քաղաքի, Լոմոնոսով փողոցի թիվ 1 փակուղի, թիվ 10 տան բնակիչ Գեորգի Մանվելի Սայադյանի կողմից, Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում իրականացվել է ինքնակամ շինության կառուցման շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, ուստի քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց.

2. Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կատարված իրավախախտման հետևանքները վերացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը առաջարկել է քաղաքացի Գեորգի Մանվելի Սայադյանին իր նախաձեռնությամբ և սեփական միջոցներով քանդել ինքնակամ կառույցը և ազատել ապօրինի տիրապետումից Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը, քանի որ, հիշյալ ինքնակամ կառուցը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N912-Ն որոշման շրջանակներում ենթակա չէ օրինականացման:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 օգոստոսի 22-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 30.07.2018թ.-ի փոստ. անդորրագիր AG010435903AM/ քաղաքացի Գեորգի Մանվելի Սայադյանը:

Գ.Սայադյանը, ներկայանալով վարչական վարույթի լսումներին, հայտնել է, որ դիմել է համայնքին օրինականացնելու համայնքի հողի վրա կառուցված ինքնակամ շինությունը, որպեսզի շարունակի շինարարական աշխատանքները, միաժամանակ ներկայացնելով Ռոստամ Սարուխանյանի անվամբ կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր և դրա հիման վրա տրված վկայական, ինչի հիմքով նաև հայտարարել է, որ հրաժարվում է տարածքը ազատել և նախկին տեսքի բերել:

Արդյունքում Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել

1. վարույթի մասնակից Գեորգի Մանվելի Սայադյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով՝ 400 000 / չորս հարյուր հազար /ՀՀ դրամ:

2. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, համայնքի ղեկավարին առաջարկել՝ Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում հայտնաբերված ինքնակամ շինությունը /խանութի նկուղային հարկ/ համարել Էջմիածին համայնքի սեփականությունը:

3. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետով, այն է՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը՝ առաջարկել Գեորգի Մանվելի Սայադյանին հատուցել Էջմիածին համայնքին հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

4. Նախազգուշացնել Գեորգի Մանվելի Սայադյանին, որ եթե նա շարունակի իրականացնել շինարարական աշխատանքները սույն արձանագրության հիման վրա համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակելուց հետո, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ և հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առքուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի <<ա>> կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ <u>իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:</u>

Տվյալ պարագայում Գեորգի Մանվելի Սայադյանը Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով իրականացրել է ապօրինի ինքնակամ կառույցի շինարարություն:

Այսինքն՝ Գեորգի Մանվելի Սայադյանը կատարել է առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասին 3-րդ կետի համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ Գեորգի Մանվելի Սայադյանի կողմից լսումների ժամանակ ներկայացված փաստաթղթերը որևէ ձևով չեն հիմնավորում իր կողմից կատարված ոչ իրավաչափ գործողությունները և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ

հոդվածի 4-րդ մասի ա) կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գեորգի Մանվելի Սայադյանի նկատմամբ նշանակել տուգանք Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար, 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. Չօրինականացնել Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի կառուցված ինքնակամ կառույցը:

3. Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում Գեորգի Մանվելի Սայադյանի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառուցված ինքնակամ կառույցը քանդել:

4. Նախազգուշացնել Գեորգի Մանվելի Սայադյանին, որ եթե նա, սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո, շարունակի իրականացնել շինարարական աշխատանքները , ապա համաձայն <<Վարչական իրավախախտումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

5. Հանձնարարել աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցներին և Էջմիածնի համայնքապետարանի <<Բարեկարգում>> տնօրինությանը, քանդել ինքնակամ կառույցը և ապօրինի տիրապետումից ազատել Էջմիածին համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը:

6. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետին, սույն որոշման 5-րդ կետի համաձայն Էջմիածնի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

7. Հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին, սույն որոշման 5-րդ կետով նախատեսված վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու դեպքում, Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված ինքնակամ կառույցի քանդման և դրան առնչվող բոլոր աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը դատական կարգով բռնագանձել Գեորգի Մանվելի Սայադյանից:

8.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

9. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

10. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 513

04 սեպտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍԲ.Մ.ՄԱՇՏՈՑ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 /«ՎԵՌՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-Ի (BEELINE ԱՊՐԱՆՔԱՆԻՇ) / ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 1/2 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 4 /«ՎԵՌՆ Արմենիա» ՓԲԸ-ի (Beeline ապրանքանիշ) / շենքին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված ինքնակամ շինությունը Էջմիածին համայնքի սեփականությունը ճանաչելու և վարչական իրավախախտման համար տուգանքը նշանակելու մասին, պարզեց որ

Գեորգի Մանվելի Սայադյանը (հասցե՝ ք. Էջմիածին, Լոմոնոսով փողոցի թիվ 1 փակուղի, թիվ 10 տուն, ն/ք 004147476), Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 4 /«ՎԵՌՆ Արմենիա» ՓԲԸ-ի (Beeline ապրանքանիշ) / շենքին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասի սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, իրականացրել է ապօրինի շինության կառուցման շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի 26.07.2018թ. արձանագրության հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտման փաստով, հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Գեորգի Մանվելի Սայադյանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող շենք-շինությունների, ճանապարհների ու փողոցների հերթական ստուգարք-այցելությունների ժամանակ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 4 /«ՎԵՌՆ Արմենիա» ՓԲԸ-ի (Beeline ապրանքանիշ)/ շենքին կից գտնվող համայնքային սեփականությունը հանդիսացող տարածքում հայտնաբերված ինքնակամ շինության կապակցությամբ 28.06.2018թ.և 25.07.2018թ. կազմված արձանագրությունները ու տեղազննության ակտերը:
- Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից 26.06.2018թ. թիվ 904 գրությամբ Գեորգի Մանվելի Սայադյանը նախազգուշացվել է, շինարարական աշխատանքների դադարեցման մասին: Լրացուցիչ կատարված տեղատեսությամբ պարզվել է, որ քաղաքացի Գեորգի Մանվելի Սայադյանի կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել ինքնակամ շինարարությունը դադարեցնելու և Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու ուղղությամբ:
- ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի 09.08.2018թ. գրությունը՝ պատասխանողի շինարարական աշխատանքները դադարեցնելու պարտավորվածության մասին:
- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթեր:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. Էջմիածին քաղաքի, Լոմոնոսով փողոցի թիվ 1 փակուղի, թիվ 10 տան բնակիչ Գեորգի Մանվելի Սայադյանի կողմից, Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 4 /«ՎԵՌՆ Արմենիա» ՓԲԸ-ի (Beeline ապրանքանիշ)/ շենքին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում իրականացվել է ինքնակամ շինության կառուցման շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, ուստի քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց.

2.Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել, ուստի Էջմիածին քաղաքի, Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 4 /«ՎԵՌՆ Արմենիա» ՓԲԸ-ի (Beeline ապրանքանիշ) / շենքին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում գտնվող ինքնակամ կառույցը համարվում է Էջմիածին համայնքի սեփականությունը:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 օգոստոսի 22-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 30.07.2018թ.-ի փոստ. անդորրագիր AG010435894AM/ քաղաքացի Գեորգի Մանվելի Սայադյանը:

Գ. Սայադյանը ներկայանալով վարչական վարույթի լսումներին, հայտնել է, որ կառույցը չի համարում ինքնակամ կառույց, քանի որ այն կառուցել է երկու օրում: Նշված կառույցով գեղեցկացրել և բարեկարգել է տարածքը, հիմնելով արագ սննդի կետ բացել է նոր աշխատատեղեր և սնունդով ապահովել քաղաքի բնակիչներին: Գեորգի Սայադյանը նաև հայտարարել է, որ հրաժարվում է տարածքը ազատել և նախկին տեսքի բերել:

Արդյունքում Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել.

1. Վարույթի մասնակից Գեորգի Մանվելի Սայադյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով՝ 400 000 / չորս հարյուր հազար /ՀՀ դրամ:

2. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով՝ Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 4 /«ՎԵՌՆ Արմենիա» ՓԲԸ-ի (Beeline ապրանքանիշ) / շենքին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում հայտնաբերված ինքնակամ շինությունը /տաղավար, ծածկոց/ համարել Էջմիածին համայնքի սեփականությունը:

3. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետով, այն է՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը՝ առաջարկել Գեորգի Մանվելի Սայադյանին հատուցել Էջմիածին համայնքին հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

4. Նախազգուշացնել Գեորգի Մանվելի Սայադյանին, որ եթե նա շարունակի իրականացնել շինարարական աշխատանքները սույն արձանագրության հիման վրա համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակելուց հետո, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն օրենսգրքի նույն հոդվածի երկրորդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

Ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 116-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները պարտավոր են ամբողջ ծավալով հատուցել հողային օրենսդրության խախտման հետևանքով իրենց կողմից պատճառված վնասները և կորուստները:

2. Ինքնակամ զբաղեցված հողամասերը վերադարձվում են դրանց սեփականատերերին, օգտագործողներին՝ առանց հողային օրենսդրությունը խախտողների կողմից այդ հողամասերի ապօրինի օգտագործման ժամանակահատվածում կատարված ծախսերի հատուցման:

3. Օգտագործման համար ոչ պիտանի վիճակի հասցված հողամասերն օգտագործման համար պիտանի վիճակի բերելու, հողամասերի ինքնակամ զբաղեցման կամ ինքնակամ շինարարության արդյունք շենքերը, շինությունները քանդելու, ինչպես նաև ոչնչացված սահմանային նշանները վերականգնելու պարտականությունը դրվում է նշված խախտումները կատարած քաղաքացիների և իրավաբանական անձանց վրա կամ իրականացվում է նրանց հաշվին:

4. Ինքնակամ կառուցված շենքի, շինության նկատմամբ կարող է ճանաչվել միայն այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա կառուցված են այդ շենքերը, շինությունները:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի <<ա>> կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ <u>իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:</u>

Տվյալ պարագայում Գեորգի Մանվելի Սայադյանը Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 4 /«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի (Beeline ապրանքանիշ)/ շենքին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով իրականացրել է ապօրինի ինքնակամ կառույցի շինարարություն:

Այսինքն՝ Գեորգի Մանվելի Սայադյանը առանց համապատասխան թույլտվության կատարել է շինարարական աշխատանքներ Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասին 3-րդ կետի համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գեորգի Մանվելի Սայադյանի նկատմամբ տուգանք նշանակել Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 4 /«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի (Beeline ապրանքանիշ)/ շենքին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար, 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 4 /«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի (Beeline ապրանքանիշ)/ շենքին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված շինությունը համարել համայնքի սեփականությունը

3. Հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետին կատարել օրենքով սահմանված անհրաժեշտ գործողությունները Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 4 /«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի (Beeline ապրանքանիշ)/ շենքին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված շինության վերաբերյալ համայնքի սեփականության փաստաթղթերի ձևակերպման համար:

4. Նախազգուշացնել Գեորգի Մանվելի Սայադյանին, որ եթե նա, սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո, շարունակի իրականացնել շինարարական աշխատանքները , ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված

նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

5. Հիմք ընդունելով այն փաստը, որ Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 4 /«ՎԵՌՆ Արմենիա» ՓԲԸ-ի (Beeline ապրանքանիշ) / շենքին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված շինությունը համարվել է համայնքի սեփականությունը նախազգուշացնել Գեորգի Մանվելի Սայադյանին ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք ուղղված են ինքնակամ կառույցն ապամոնտաժելուն:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

7. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարանին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

8. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ/ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ